# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<27>> փետրվարի 2025 թվականի N 480 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Համայնքային ծառայության մասին >> օրենքի 31- րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետությա Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կին համայնքային ծառայողների (այսուհետ՝ համայնքային ծառայողներ) նկատմամբ կիրառել խրախուսանք կանանց տոնի կապակցությամբ՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ համաձայն հավելվածի:

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային ծառայողներին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ս.ՄԻՆԱՍՅԱՆ
պաշտոնակատար

ք.Գյումրի

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի
պաշտոնակատարի 2025 թվականի
փետրվարի 27-ի N 480Ա որոշման

| Հ/Հ | Պաշտոնը | Ազգանուն, անուն,հայրանուն | Միանվագ դրամական պարգևատրման չափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի ժ/պ | Մուրադյան Լիլիթ Նորիկի | 25.000 |
| 2 | Կրթության բաժնի պետ | Ալեքսանյան Շողիկ Վիկտորի | 25.000 |
| 3 | Իրավաբանական բաժնի պետի ժ/պ | Չախոյան Արմենուհի Վարուժանի | 25.000 |
| 4 | Անձնակազմի կառավարման բաժնի պետ | Վարդանյան Սյուզաննա Սուրենի | 25.000 |
| 5 | Մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ | Թովմասյան Լիլիթ Արագածի | 25.000 |
| 6 | Քարտուղարության բաժնի պետ | Մեքինյան Աննա Հրաչիկի | 25.000 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«27» փետրվարի 2025 թվականի N 479-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 07.10.2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ ԱՐԴ/0239/02/24 ՎՃՌՈՎ ԾՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ՝ ԴԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՄԱՐԻԱՄ ԳԱՐԵԳԻՆԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ, ՄԱՆԵ ԳԱՐԵԳԻՆԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ, ՏԱԹԵՎ ԳԱՐԵԳԻՆԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ, ԱՐԹՈՒՐ ԳԱՐԵԳԻՆԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԱՔՍԻ ԳԱՐԵԳԻՆԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025 թվականի փետրվարի 26-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստին քննարկվել է Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝ Լ.Աբրահամյանի գրությունը անչափահասներ՝ 31.10.2013 թվականին ծնված Դիանա Հովհաննեսի Սարգսյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ739429), 14.05.2016 թվականին ծնված Մարիամ Գարեգինի Ասլանյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԱԲ458873), 11.06.2017 թվականին ծնված Մանե Գարեգինի Ասլանյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ601171), 01.10.2018 թվականին ծնված Տաթև Գարեգինի Ասլանյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ033697), 27.05.2020 թվականին ծնված Արթուր Գարեգինի Ասլանյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ255470) և 16.08.2022 թվականին ծնված Արաքսի Գարեգինի Ասլանյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ597042) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ ճանաչելու վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 07.10.2024 թվականի թիվ ԱՐԴ/0239/02/24 վճռով Մարինա Աշոտի Սարգսյանը զրկվել է 31.10.2013 թվականին ծնված Դիանա Հովհաննեսի Սարգսյանի նկատմամբ ունեցած ծնողական իրավունքներից:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 07.10.2024 թվականի թիվ ԱՐԴ/0239/02/24 վճռով Մարինա Աշոտի Սարգսյանը և Գարեգին Միքայելի Ասլանյանը զրկվել են 14.05.2016 թվականին ծնված Մարիամ Գարեգինի Ասլանյանի, 11.06.2017 թվականին ծնված Մանե Գարեգինի Ասլանյանի, 01.10.2018 թվականին ծնված Տաթև Գարեգինի Ասլանյանի, 27.05.2020

թվականին ծնված Արթուր Գարեգինի Ասլանյանի և 16.08.2022 թվականին ծնված Արաքսի Գարեգինի Ասլանյանի նկատմամբ ունեցած ծնողական իրավունքներից:

Ղեկավարվելով ընտանեկան օրենսգրքի 109-րդ, 110-րդ հոդվածների 1-ին մասերի, Հայաստանի Հանրապետության «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 2-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 26-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հաշվառել՝ 31.10.2013 թվականին ծնված Դիանա Հովհաննեսի Սարգսյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ739429) առանց ծնողական խնամքի մնացած երեխա:
2. Հաշվառել՝ 14.05.2016 թվականին ծնված Մարիամ Գարեգինի Ասլանյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԱԲ458873) առանց ծնողական խնամքի մնացած երեխա:
3. Հաշվառել՝ 11.06.2017 թվականին ծնված Մանե Գարեգինի Ասլանյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ601171) առանց ծնողական խնամքի մնացած երեխա:
4. Հաշվառել՝ 01.10.2018 թվականին ծնված Տաթև Գարեգինի Ասլանյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ033697) առանց ծնողական խնամքի մնացած երեխա:
5. Հաշվառել՝ 27.05.2020 թվականին ծնված Արթուր Գարեգինի Ասլանյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ255470) առանց ծնողական խնամքի մնացած երեխա:
6. Հաշվառել՝ 16.08.2022 թվականին ծնված Արաքսի Գարեգինի Ասլանյանին (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ597042) առանց ծնողական խնամքի մնացած երեխա:

2025-02-27 10:53:05 GMT-4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ս.ՄԻՆԱՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2 22 00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» փետրվարի 2025 **թվականի** N 478-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՀԵՆՐԻԿ ՎԱՀԱՆԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՇԱՐՔ N 20 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 225.29 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Հենրիկ Վահանի Կուրղինյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ տան տեխնիկական անձնագիր N 3106 տրված՝ 1987 թվականի նոյեմբերի 10-ին) Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոց 2-րդ շարք N 20 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 225.29 (երկու հարյուր քսանհինգ ամբողջ քսանինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 21.2(քսանմեկ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություն:

Քաղաքացի Հենրիկ Վահանի Կուրղինյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և նրա վրա ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, հիմք ընդունելով քաղաքացի Հենրիկ Վահանի Կուրղինյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի փետրվարի 10-ին N 2072 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել և վերականգնել քաղաքացի Հենրիկ Վահանի Կուրղինյանի (ծնված 1950 թվականի հունվարի 3-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոց 2-րդ շարք N 20 հասցեի տան կառուցման և սպասարկման համար հատկացված օրինական 727,95 (յոթ հարյուր քսանյոթ ամբողջ իննսունհինգ հարյուրերրորդական) հողամասին կից ավել օգտագործվող 225.29 (երկու հարյուր քսանհինգ ամբողջ քսանինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով և նրա վրա առկա շինությունների նկատմամբ, համաձայն որակավորման վկայական ունեցող անձի կողմից տրված հողամասի հատակագծի:
2. Քաղաքացի Հենրիկ Վահանի Կուրղինյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոց 2-րդ շարք N 20 հասցեի տան հողամասում առկա 21.2 (քսանմեկ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները թողնել ինքնակամ:
3. Պարտավորեցնել քաղաքացի Հենրիկ Վահանի Կուրղինյանին ինքնակամ զավթած համայնքապատկան հողամասը քաղաքաշինական նպատակով օգտագործելու անհրաժեշտությունն առաջանալու դեպքում այն ազատել, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների առաջին իսկ պահանջով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հենրիկ Վահանի Կուրղինյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Ս. ՄԻՆԱՍՅԱՆ**
**(ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ)**

**2025թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» փետրվարի 2025 **թվականի** N 477-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի № 2972-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 20.01.2025 թվականի Կ-20012025-08-0114 որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 15-ի <<Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոց 2-րդ շարքի N 20 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 43.52 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները օրինական ճանաչելու և հողամասի սահմանները վերականգնելու մասին>> N 2972-Ա որոշումը:

**Ս. ՄԻՆԱՍՅԱՆ**
**(ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ)**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«26» փետրվարի 2025 **թվականի** N 476-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 2835-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 2-ի « Քաղաքացի Աշոտ Շմավոնի Միրաքյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ռ. Դանիելյան փողոց N 26 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 93.64 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 267.27 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2835-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղի ունեցած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 2-ի « Քաղաքացի Աշոտ Շմավոնի Միրաքյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ռ. Դանիելյան փողոց N 26 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 93.64 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 267.27 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2835-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) Վերնագրում «267.27 քառակուսի մետր մակերեսով հողամասի» թվերից և բառերից հետո լրացնել «և նրա վրա առկա շինությունների» բառերով:
2) Նախաբանում «267.27 (երկու հարյուր վաթսունյոթ ամբողջ քսանյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս » թվերից և բառերից հետո լրացնել «որի վրա առկա շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը» թվերով և բառերով:
3) Որոշման 1-ին կետում «267.27 (երկու հարյուր վաթսունյոթ ամբողջ քսանյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի» թվերից և բառերից հետո լրացնել « և նրա վրա առկա շինությունների » բառերով:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ս.ՄԻՆԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» փետրվարի 2025 թվականի N 475- -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՊԱՐԻ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻԱՆՆԱ ՍԵՐԳԵՅԻ ՄԱՄՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Մարիաննա Սերգեյի Մամյանի 2025 թվականի փետրվարի 24-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Պարի և սպորտային պարերի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարիաննա Սերգեյի Մամյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2025 թվականի փետրվարի 27-ից:
2. Չվճարվող արձակուրդի տևողությունը 6 օր՝ 2025 թվականի փետրվարի 27-ից մինչև մարտի 4-ը ներառյալ:
3. Չվճարվող արձակուրդի ընթացքում Մարիաննա Սերգեյի Մամյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության փոխտնօրեն Սաթի Յուրիկի Աթոյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիաննա Սերգեյի Մամյանին և Սաթի Յուրիկի Աթոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Ս.ՄԻՆԱՍՅԱՆ**
**պաշտոնակատար**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

«26» փետրվարի 2025 **թվականի** N 474-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈԳՈԼԻ ՓՈՂՈՑ № 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 103.39 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 355.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Մանվել Սարգսի Խաչատրյանին(3/6 մաս) և Աստղիկ Գեբեռի Սեֆերյանի(3/6 մաս) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Գոգոլի փողոց № 14 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործում են 355.6 (երեք հարյուր հիսունհինգ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս որի վրա առկա ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
Քաղաքացիներ Մանվել Խաչատրյանի և Աստղիկ Սեֆերյանի լիազորված անձ Արմեն Ջուլբերտի Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ հողամասի և շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:
Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 1-ին հոդվածի և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացիներ Մանվել Խաչատրյանի և Աստղիկ Սեֆերյանի լիազորված անձ Արմեն Ջուլբերտի Խոցանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հունվարի 31-ին № 1310 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Ճանաչել քաղաքացիներ Մանվել Սարգսի Խաչատրյանի(3/6 մաս)(ծնված 1972 թվականի մարտի 26-ին) և Աստղիկ Գեբեռի Սեֆերյանի(3/6 մաս)(ծնված 1976 թվականի հոկտեմբերի 7-ին) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Գոգոլի փողոց № 14 հասցեում գտնվող 300.0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա բնակելի շինությունների նկատմամբ:
2.Գյումրի քաղաքի Գոգոլի փողոց N 14 հասցեին կից գտնվող սահմանված չափից ավել օգտագործվող 55.6 (հիսունհինգ ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Մանվել Խաչատրյանին և Աստղիկ Սեֆերյանին, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տաս հազար հինգ հարյուր տասնչորս) դրամ 1.0 քառակուսի մետրի դիմաց, ընդամենը 584578 (հինգ հարյուր ութսունչորս հազար հինգ հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Գյումրի քաղաքի Գոգոլի փողոց N 14 հասցեում գտնվող 23.33(քսաներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ինքնակամ շինությունը ենթակա է քանդման:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Մանվել Խաչատրյանի և Աստղիկ Սեֆերյանի լիազորված անձ Արմեն Ջուլբերտի Խոցանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Ս.ՄԻՆԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» փետրվարի 2025 **թվականի** N 473.-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N 2873-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 04-ի N 2873-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 30/01/2025 թվականի N Կ-30012025-08-0163 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 04-ի <<Քաղաքացիներ Քնարիկ Արմենակի Ղանդյանին (1/2 մաս) և Նվարդ Վարդգեսի Ղանդյանին (1/2 մաս) պատկանող Գյումրի քաղաքի Մազմանյան փողոց N 282 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 146,4 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ բացված 2 պատուհանն օրինական ճանաչելու մասին>> N 2873-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<146,4(մեկ հարյուր քառասունվեց ամբողջ չորս տասնորդական>> թիվն ու բառերը փոխարինել <<141,96(մեկ հարյուր քառասունմեկ ամբողջ իննսունվեց հարյուրերորդական)>> թվով և բառերով.

2) վերնագրում և նախաբանում <<ճանաչելու>> բառից հետո լրացնել <<և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 7,91(յոթ ամբողջ իննսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության կարգավիճակի>> բառերն ու թիվը.

3) նախաբանում <<ենթակետի>> բառից հետո լրացնել <<ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ,3-րդ հոդվածներով>> թվերը և բառերը.

4) որոշումը լրացնել 1¹. կետով հետևյալ բովանդակությամբ.

<<1¹. Ճանաչել Քնարիկ Արմենակի Ղանդյանի (ծնված 03 սեպտեմբերի 1959 թվականին) և Նվարդ Վարդգեսի Ղանդյանի (ծնված 24 օգոստոսի 1959 թվականին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Մազմանյան փողոց N 282 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող 7,91(յոթ ամբողջ իննսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:>>:

2025-02-26 14:17:50 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Ս.ՄԻՆԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«26» փետրվարի 2025 **թվականի** N 472 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի N 2032-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հուլիսի 10-ի N 2032-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 03/02/2025 թվականի N Կ-03022025-08-0208 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ կետերով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հուլիսի 10-ի <<Քաղաքացիներ Միխաել Համայակի Պետրոսյանին և Լաուրա Հայկազի Վարդանյանին պատկանող Գյումրի քաղաքի Մենդելեևի փողոցի N 26 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող 127,26 մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2032-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
    1) որոշման 1-ին կետում <<6,49(վեց ամբողջ քառասունինը հարյուրերրորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<3,07(երեք ամբողջ յոթ հարյուրերրորդական)>> թվով և բառերով.
    2) որոշման 2-րդ կետում <<հողամասի>> բառից հետո հանել <<և նրա վրա առկա 0,55 (զրո ամբողջ հիսունհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպի>> բառերը և թվերը.
    3) որոշման 3-րդ կետում <<N4>> թիվը փոխարինել <<N2>> թվով:

2025-02-26 14:19:08 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Ս.ՄԻՆԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» փետրվարի 2025 **թվականի** N 471-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 23 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու N 23 հասցեի կաթսայատունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Նարինե Խաչատուրի Հարոյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06022024-08-0001 վկայական), որտեղ հողամասի նպատակային նշանակությունը նշված է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով վերը նշված հասցեի 10257,8 (տասը հազար երկու հարյուր հիսունյոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասից 234,7 (երկու հարյուր երեսունչորս ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հատվածը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս, իսկ 27,63 (քսանյոթ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հատվածը՝ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամաս:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու N 23 հասցեի կաթսայատան 10257,8 (տասը հազար երկու հարյուր հիսունյոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասից 234,7 (երկու հարյուր երեսունչորս ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հատվածի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու միջոցով համապատասխանեցնել Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման ծրագրային փաստաթղթերին, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, իսկ 27,63 (քսանյոթ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հատվածի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ այլ հողեր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին քաղաքացի Նարինե Խաչատուրի Հարոյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** 2025-02-26 14:24:25 GMT+4 Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից **Ս. ՄԻՆԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

26

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<26>> փետրվարի 2025 թվականի N 470-Ա

### ԱՐՏՈՒՇ ՅԱՇԱՅԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Արտուշ Յաշայի Եղիազարյանի 2025 թվականի փետրվարի 25-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Արտուշ Յաշայի Եղիազարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդականի պաշտոնում ՝ 2025 թվականի փետրվարի 27-ից:
2. Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի՝ ամսական 304.000 (երեք հարյուր չորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտուշ Յաշայի Եղիազարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ս.ՄԻՆԱՍՅԱՆ
պաշտոնակատար

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» փետրվարի 2025 **թվականի** N 469-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի № 1267-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի «Քաղաքացի Հովիաննես Գերասիմի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Արմենյան փողոց N3 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 48.08 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունը օրինական ճանաչելու մասին» № 1267-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 19.06.2024 թվականի Կ-19062024-08-0151 որոշումը՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. «Քաղաքացի Հովիաննես Գերասիմի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Արմենյան փողոց N3 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 48.08 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունն օրինական ճանաչելու մասին» № 1267-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Նախաբանում և որոշման 1-ին և 3-րդ կետում «Հովիաննս» բառը փոխարինել «Հովիաննես» բառով:

2025-02-25 17:21:51 GMT+4
Հաստատված է ԷՀԵՆԳ-ի կողմից

**Ս. ՄԻՆԱՍՅԱՆ**
**(ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ)**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«26» փետրվարի 2025 թվականի № 468-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Կ. ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑ 7/3 (ՎԿԱՅԱԿԱՆ №23042024-08-0025) ԵՎ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 4/57 (ՎԿԱՅԱԿԱՆ №20022025-08-0057) ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Կարեն Գասպարյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №2570 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Կ. Հալաբյան փողոց 7/3 (վկայական №23042024-08-0025) և Մուշ-2 թաղամաս 4/57 (վկայական №20022025-08-0057) հասցեագրությամբ անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 7/3 առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտ**

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

2025-02-26 10:42:17 GMT+4
Համաձայնված է ԷԼԵԿՏ-ի կողմից

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«26» փետրվարի 2025 թվականի № 467-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԵՐԿԱԹԳԾԻ ԹԱՂԱՄԱՍ (Ե/Գ) 18 ՇԵՆՔ 1 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ԳՐԱՆՑՄԱՆ ԳԻՐՔ 10260) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Պավել Կովալենկոյի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №2498 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Երկաթգծի թաղամաս (Ե/գ) 18 շենք 1 բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (Գրանցման գիրք 10260) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Երկաթգծի թաղամաս, 18/1 բնակելի տուն**

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

<<25>> փետրվարի 2025 թվականի N 466-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՁՅՈՒՆԻԿ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ՍԵԴՐԱԿԻ ԴԵՄԻՐՃՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Անահիտ Սեդրակի Դեմիրճյանի 2025 թվականի փետրվարի 24-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի<< Ձյունիկ-մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Սեդրակի Դեմիրճյանին տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի փետրվարի 25-ից:

**2.** Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 13 աշխատանքային օր՝ 2025 թվականի փետրվարի 25-ից մինչև մարտի 13-ը ներառյալ:

**3.** Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Անահիտ Սեդրակի Դեմիրճյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության մեթոդիստ Գայանե Լեոնիկի Տոնոյանին:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անահիտ Սեդրակի Դեմիրճյանին և Գայանե Լեոնիկի Տոնոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Ս.ՄԻՆԱՍՅԱՆ**
**պաշտոնակատար**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2025 թվականի № 465-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 65/1 (ՎԿԱՅԱԿԱՆ №21112014-08-0015) ԵՎ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 65/8 (ՎԿԱՅԱԿԱՆ №26072021-08-0027) ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Բարսիս»ՍՊԸ-ի լիազորված անձ Աղվան Խաչատրյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №2444 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Շիրակացու փողոց 65/1 (վկայական №21112014-08-0015) և Շիրակացու փողոց 65/8 (վկայական №26072021-08-0027) անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Շիրակացու փողոց, 65/1 շինություն**

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2025 թվականի №464-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ 76 (ՎԿԱՅԱԿԱՆ №2640566), ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ 76/1 (ՎԿԱՅԱԿԱՆ №2640562), ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ 76/2 (ՎԿԱՅԱԿԱՆ №2412141) ԵՎ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ 76/3 (ՎԿԱՅԱԿԱՆ №2839188) ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Վլադիմիր Ալանակյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №2433 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Մյասնիկյան փողոց 76 (վկայական №2640566), Մյասնիկյան փողոց 76/1 (վկայական №2640562), Մյասնիկյան փողոց 76/2 (վկայական №2412141) և Մյասնիկյան փողոց 76/3 (վկայական №2839188) անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Մյասնիկյան փողոց, 76 շինություն**

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2025 թվականի № 463-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ. ՇԻՐԱԶԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 14.04 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ (08-001-0741-0006, 08-001-0741-0017, 08-001-0741-0050-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Հ. Շիրազի հարևանությամբ գտնվող 14.04 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր (08-001-0741-0006, 08-001-0741-0017, 08-001-0741-0050-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Շիրազի փողոց, 9/1 հողամաս**

2025-02-25 12:44:17 GMT+4
Հաստատված է ԷՍԷՊ-ի կողմից

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՎԵՏԻՔ ՋԻՎԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**«25»«[illegible]» 2025 թվական N 462 – Ա**

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Սարիկ Մինասյանս, 2025 թվականի փետրվարի 17-ին ժամը 11:10-ին Գյումրի քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Ավետիք Ջիվանի Հակոբյանի (հասցե՝ ք. Գյումրի, Կ. Հալաբյան փ., շ.13, բն.51) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, պարզեցի՝

### 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Ավետիք Ջիվանի Հակոբյանին պատկանող MERCEDES-BENZ S 420 մակնիշի 35GO294 պետահամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է գույքահարկի 2017-2020 թվականների և 2021-2024 թվականների չվճարված հարկից (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի

եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 196781820852160324 տեղեկանքը):

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով վճարման ենթակա գումարը 08.10.2024 թվականի դրությամբ տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ հարկային պարտավորությունները կազմել են. 2017-2020 թվականների համար՝ 663.137(վեց հարյուր վաթսուներեք հազար մեկ հարյուր երեսունյոթ ) ՀՀ դրամ, որից 489.500(չորս հարյուր ութսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը կազմում է ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 173.637(մեկ հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ գումար:

2021-2024 թվականների համար՝ 625.795 (վեց հարյուր քսանհինգ հազար յոթ հարյուր իննսունհինգ ) ՀՀ դրամ, որից 534.000(հինգ հարյուր երեսունչորս հազար) ՀՀ դրամը կազմել է ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 91.795(իննսունմեկ հազար յոթ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ գումար:

Վճարման ենթակա գումարը 08.10.2024 թվականի դրությամբ կազմել է փոխադրամիջոցի գույքահարկի գծով ընդամենը 1.288.932(մեկ միլիոն երկու հարյուր ութսունութ հազար ինը հարյուր երեսուներկու ) ՀՀ դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

Օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական

անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա», և «բ» կետի համաձայն՝ իրականացնում են հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,

Իրականացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ հարկային պարտավորությունը փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ փոխադրամիջոցները.

Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը.

Օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենսգրքի 246 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունն առաջանում է փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման (հարկային պարտավորությունների առաջացման) համար հիմք են համարվում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

Օրենսգրքի 247 հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Օրենսգրքի 251 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 239-րդ հոդվածի 1-ին մասի, 240-րդ հոդվածի 1-ին մասի, 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի, 242-րդ հոդվածի 1-ին մասի, 243-րդ հոդվածի 1-ին մասի, 246-րդ հոդվածի 1-ին մասի, 247-րդ հոդվածի, 251-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդված 1–ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 55-րդ, 56-րդ հոդվածների, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ

1. Քաղաքացի՝ Ավետիք Ջիվանի Հակոբյանից հօգուտ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել 1.288.932(մեկ միլիոն երկու հարյուր ութսունութ հազար ինը հարյուր երեսուներկու ) ՀՀ դրամ գումար, որից ապառքը կազմում է 1.023.500(մեկ միլիոն քսաներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 265.432 (երկու հարյուր վաթսունհինգ հազար չորս հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ գումար:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Ավետիք Ջիվանի Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ավետիք Ջիվանի Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

**Ս. ՄԻՆԱՍՅԱՆ**

պաշտոնակատար

2025թ., ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ
## ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵԴՐԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«25»«փետրվարի» 2025 թվական N 461 – Ա

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Սարիկ Մինասյանս, 2025 թվականի փետրվարի 18-ին ժամը 11:30-ին Գյումրի քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Սեդրակ Հարությունի Վիրաբյանի (հասցե՝ ք. Գյումրի Վարդ Բաղ 1 թաղամաս 1 մկրշ. շ.5 բն.22) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

### 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի՝ Սեդրակ Հարությունի Վիրաբյանին պատկանող MERCEDES-BENZ S 430 մակնիշի 01DQ010 պետահամարանիշի փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է գույքահարկի 2012-2020 թվականների և 2021-2024 թվականների չվճարված հարկից (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու

համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 196781790649121043 տեղեկանքը):

Փոխադրամիջոցի գույքահարկի գծով վճարման ենթակա գումարը 08.10.2024 թվականի դրությամբ տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ հարկային պարտավորությունները կազմել են. 2012-2020 թվականների համար՝ 1.693.559(մեկ միլիոն վեց հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր հիսունինը ) ՀՀ դրամ, որից 1.163.129(մեկ միլիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար մեկ հարյուր քսանինը ) ՀՀ դրամը կազմում է ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 530.430(հինգ հարյուր երեսուն հազար չորս հարյուր երեսուն ) ՀՀ դրամ գումար:

2021-2024 թվականների համար՝ 629.310(վեց հարյուր քսանինը հազար երեք հարյուր տասը) ՀՀ դրամ, որից 537.000(հինգ հարյուր երեսունյոթ հազար) ՀՀ դրամը կազմել է ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 92.310(իննսուներկու հազար երեք հարյուր տասը) ՀՀ դրամ գումար:

Վճարման ենթակա գումարը 08.10.2024 թվականի դրությամբ կազմել է փոխադրամիջոցի գույքահարկի գծով ընդամենը 2.322.869(երկու միլիոն երեք հարյուր քսաներկու հազար ութ հարյուր վաթսունինը ) ՀՀ դրամ գումար:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Հարկային օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ:

Օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական

անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

Օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի համաձայն՝ իրականացնում են հարկ վճարողների և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով,

Իրականացնում են փոխադրամիջոցների գույքահարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ հարկային պարտավորությունը փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտ են համարվում հետևյալ փոխադրամիջոցները.

Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը.

Օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Օրենսգրքի 246 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունն առաջանում է փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման (հարկային պարտավորությունների առաջացման) համար հիմք են համարվում փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

Օրենսգրքի 247 հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու տարին:

Օրենսգրքի 251 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված գույքահարկի պարտավորության գումարները) իրենց պետական գրանցման (հաշվառման) վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները: Հաշվառման (գրանցման) վայրի բացակայության դեպքում ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն մասում նշված գումարները վճարում են իրենց հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա փոխադրամիջոցների գույքահարկի՝ սույն հոդվածում նշված գումարները վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, 239-րդ հոդվածի 1-ին մասի, 240-րդ հոդվածի 1-ին մասի, 241-րդ հոդվածի 2-րդ ենթակետի «ա» և «բ» կետի, 242-րդ հոդվածի 1-ին մասի, 243-րդ հոդվածի 1-ին մասի, 246-րդ հոդվածի 1-ին մասի, 247-րդ հոդվածի, 251-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28–րդ հոդված 1–ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, 53-րդ, 55-րդ, 56-րդ հոդվածների, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ու Մ   Ե Մ

1. Քաղաքացի՝ Սեդրակ Հարությունի Վիրաբյանից հօգուտ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի գանձել 2.322.869(երկու միլիոն երեք հարյուր քսաներկու հազար ութ հարյուր վաթսունինը ) ՀՀ դրամ գումար, որից ապառքը կազմում է 1.700.129(մեկ միլիոն յոթ հարյուր հազար մեկ հարյուր քսանինը) ՀՀ դրամ, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 622.740(վեց հարյուր քսաներկու հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ գումար:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Սեդրակ Հարությունի Վիրաբյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Սեդրակ Հարությունի Վիրաբյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

2025.02.25 11:31:36 GMT+4
Համաձայնած է էլեկտրոնային կոդով

**Ս. ՄԻՆԱՍՅԱՆ**

2025թ.,ք.Գյումրի

պաշտոնակատար

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«25» փետրվարի 2025 թվականի N 460 -Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ, ԴՐԱՆՑ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 50-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 2-րդ մասի 6-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով Գյումրի համայնքում թափառող շների հիմնախնդիրը լուծելու հարցում Երևանի «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մասնագետների Գյումրի համայնքին աջակցելու պատրաստակամությունը՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում իրականացնել թափառող շների թվաքանակի կանոնակարգման և վնասազերծման ծրագիր (այսուհետ՝ ծրագիր)՝ հետևյալ փուլերով.
1) Գյումրի համայնքի վարչական տարածքում թափառող շների վիճակագրության ուսումնասիրություն և նույնականացման աշխատանքներ,
2) թափառող շների բռնում համապատասխան ժամանակակից միջոցներով (հատուկ քնեցնող հրացան կամ բռնման գործընթացում դժվարություններ առաջացնող կենդանիների դեպքում ցանց կրակող հարմարանք),
3) բռնված կենդանիներին այդ նպատակի համար հարմարեցված տրանսպորտային միջոցներով տեղափոխում համապատասխան կացարան,
4) տեղափոխված կենդանիների նախնական հետազոտություն,
5) անասնաբուժական ծառայությունների մատուցում (ախտորոշումներ, պատվաստումներ),
6) առողջ և բուժման ենթակա կենդանիների ստերջացում (ստերլիզացում),
7) անասնաբուժական միջոցառումներն իրականացնելուց հետո, եռօրյա ժամկետում բուժված և ստերիլիզացված կենդանիների բացթողնում,
8) անասնաբույժի եզրակացությունից հետո բուժման ոչ ենթակա հիվանդ կենդանիների քնեցում և դիերի տեղափոխում «Քաղաքային աղբադաշտի տարածքում հատկացված վայր»:
2. Հանձնարարել Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին և Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անասնաբույժին՝

1) ծրագրի իրականացման ընթացքում համագործակցել Երևանի «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մասնագետների հետ,

2) յուրաքանչյուր շաբաթվա ավարտին Գյումրի համայնքի ղեկավարի պաշտոնակատարին ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

3. Սույն որոշման 1-ին կետի 4-8-րդ ենթակետերում նշված աշխատանքներն իրականացվելու են Գյումրի քաղաքի Բուլվարային փողոց 55 հասցեի շինությունում և հարակից տարածքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ս.ՄԻՆԱՍՅԱՆ**
**պաշտոնակատար**

**2025 թվական**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2025 թվականի № 459-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Ա. ՊՈՒՇԿԻՆԻ ՓՈՂՈՑ, 110/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 11,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 4,81 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի փետրվարի 19-ի №381–Ա որոշումը, հողամասի ու շինությունների հատակագծերը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Ա. Պուշկինի փողոց, 110/1 հասցեի բնակելի տան հողամասին կից 11,0 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 4,81 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությանը տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Պուշկինի փողոց, 110/2 շինություն**

2025-03-25 12:45:10 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«25» փետրվարի 2025 **թվականի** N 458-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑ 29 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԻ ՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Հակոբյան փողոց 29 հասցեի բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի՝ Արսեն Ռազմիկի Ավդալյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 2422734 վկայական):

Քաղաքացի Արսեն Ռազմիկի Ավդալյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Հակոբյան փողոց 29 հասցեի բնակելի տան մի մասի՝ 15,08 (տասնհինգ ամբողջ ութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով; 29,8 (քսանինն ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով; 6,18 (վեց ամբողջ տասնութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով սենքերի նպատակային նշանակությունները բնակելիից հասարակականի, իսկ գործառական նշանակությունները, որպես առևտրի և սպասարկման օբյեկտ փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացիԱրսեն Ռազմիկի Ավդալյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հոկտեմբերի 10-ին N 17179 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Հակոբյան փողոց 29 հասցեի բնակելի տան մի մասի՝ 15,08 (տասնհինգ ամբողջ ութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով; 29,8 (քսանինն ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով; 6,18 (վեց ամբողջ տասնութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով սենքերի նպատակային նշանակությունները բնակելիից հասարակականի, իսկ գործառական նշանակությունները, որպես առևտրի և սպասարկման օբյեկտ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Արսեն Ռազմիկի Ավդալյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Ս. ՄԻՆԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«25» փետրվարի 2025 **թվականի** N 457-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի N 707-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հինք ընդունելով, որ ավտոտնակը ապամոնտաժվել է Գյումրու համայնքապետարանի պահանջով և հաշվի առնելով քաղաքացի Մարիամ Բաբայանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի փետրվարի 10-ին N 1757 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2017 թվականի մայիսի 22-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի «Քաղաքացի Մարիամ Վարդանի Բաբայանին ժամանակավոր մետաղական ավտոտնակ տեղադրելու նպատակով Գյումրի համայնքին պատկանող Գարեգին Նժդեհի փողոցի N 9/22 հասցեի 20.0 քառակուսի մետր մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 707-Ա որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2017 թվականի մայիսի 24-ի (գրանցված սեղանամատյանում N 2978) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 29052017-08-0015 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մարիամ Բաբայանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-02-25 12:18:58 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Ս.ՄԻՆԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» փետրվարի 2025 **թվականի** N 456-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N 1261-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 29-ի N 1261-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով: Ներկայացվել է նոր ճշգրտված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 29-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Օդանավակայանի թաղամասի հարևանությամբ 134,63 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 547,6 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Գուրգեն Աշոտի Սիմոնյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 1261-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) վերնագրում և նախաբանում <<547,6(հինգ հարյուր քառասունյոթ ամբողջ վեց տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<505,17(հինգ հարյուր հինգ ամբողջ տասնյոթ հարյուրերրորդական)>> թվով և բառերով.
   2) որոշման 2-րդ կետում <<147,6(մեկ հարյուր քառասունյոթ ամբողջ վեց տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<105,17(մեկ հարյուր հինգ ամբողջ տասնյոթ հարյուրերրորդական)>> թվով և բառերով, <<655639(վեց հարյուր հիսունհինգ հազար վեց հարյուր երեսունինն)>> թիվը և բառերը փոխարինել <<467165(չորս հարյուր վաթսունյոթ հազար մեկ հարյուր վաթսունհինգ)>> թվով և բառերով

2025-02-24 16:53:27 GMT+4
Հաստատված ԷԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ս.ՄԻՆԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<24>> փետրվարի 2025 թվականի N 455 -Ա

## ԱՆԱՀԻՏ ԼԵԳՐԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կրթության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Անահիտ Լեգրանի Գասպարյանին ազատել բաժնի պետի ծառայողական պարտականությունների կատարումից՝ 2025 թվականի փետրվարի 24-ից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անահիտ Լեգրանի Գասպարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ս.ՄԻՆԱՍՅԱՆ
պաշտոնակատար

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» փետրվարի 2025 **թվականի** N 454-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԵՐՄԻՆԵ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ 12, ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՕՂԱԿ 8 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հերմինե Փահլևանյանի 2025 թվականի փետրվարի 13-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի փետրվարի 14-ին 2092 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հերմինե Փահլևանյանին Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհ 12, Բագրատունյաց օղակ 8 հասցեներում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 3,4 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի փետրվարի 20- ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Հերմինե Փահլևանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-02-24 10:55:09 GMT+4

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» փետրվարի 2025 **թվականի** N 453 Ա

**«ԳԱԶՈՆԵ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 189 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Գազոնե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Կարեն Հակոբյանի (ՀՎՀՀ՝ 05548329, գրանցման ամսաթիվ՝ 16.04.2019 թվական) 2025 թվականի փետրվարի 19-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի փետրվարի 20-ին 2413-2025 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.**

1. Թույլատրել «Գազոնե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Կարեն Հակոբյանին Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 189 հասցեում իրականացնել հեղուկացված գազի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Գազոնե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Կարեն Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-02-21 14:49:17 GMT+4
Հաստատված է էՍՏՏ-ի կողմից

mID

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
պաշտոնակատար

**2025 թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» փետրվարի 2025 **թվականի** N 452-Ա

**«ԳԱԶՈՆԵ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 189 ՀԱՍՑԵԻ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏԻՆ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Գազոնե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Կարեն Հակոբյանի (ՀՎՀՀ՝ 05548329, գրանցման ամսաթիվ՝ 16.04.2019 թվական) 2025 թվականի փետրվարի 19-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի փետրվարի 20-ին 2412-2025 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.**

1. Թույլատրել «Գազոնե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Կարեն Հակոբյանին Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 189 հասցեի առևտրի օբյեկտում, ժամը 24:00-ից հետո, իրականացնել աշխատանք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Գազոնե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Կարեն Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-02-21 14:44:23 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
պաշտոնակատար

**2025 թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» փետրվարի 2025 **թվականի** N 451-Ա

**«ԳԱԶՈՆԵ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ 54 ՀԱՍՑԵԻ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏԻՆ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Գազոնե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Կարեն Հակոբյանի (ՀՎՀՀ՝ 05548329, գրանցման ամսաթիվ՝ 16.04.2019 թվական) 2025 թվականի փետրվարի 19-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի փետրվարի 20-ին 2408-2025 թվագրմամբ)՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.**

1. Թույլատրել «Գազոնե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Կարեն Հակոբյանին Գյումրի քաղաքի Մովսես Խորենացի 54 հասցեի առևտրի օբյեկտում, ժամը 24:00-ից հետո, իրականացնել աշխատանք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Գազոնե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Կարեն Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-02-21 14:41:24 GMT+4
Հաստատված է ԷՀԵՆԳ-ի կողմից

mID

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
պաշտոնակատար

**2025 թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» փետրվարի 2025 **թվականի** N 450-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԹՎՈՎ ՔՍԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար սուբվենցիոն ծրագրի շրջանակում բաց մրցույթի միջոցով թվով քսան փողոցների հիմնանորոգման աշխատանքների և գնանշման հարցման ընթացակարգի միջոցով թվով երկու մշակութային ՀՈԱԿ-ների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով սահմանել՝

1) թվով քսան փողոցների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Էդուարդ Մարտիրոսյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,
բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հարություն Մխիթարյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի տեղակալ,
գ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Աշոտ Գալստյան -<<Գյումրու քաղաքային ճանապարհներ>> և Գյումրի համայնքի մասնակցությամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրի փորձագետ,
դ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Վարդան Ալթունյան - Գյումրի համայնքի ներդրումային ծրագրերի փորձագետ,
ե. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

2) թվով երկու մշակութային ՀՈԱԿ-ների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Հովհաննես Ղազարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետի օգնական,
բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Հովհաննես Սահակյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ,

3) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական

բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Սարգսյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-02-21 17:46:00 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Ս. ՄԻՆԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**